ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Գ Ի Տ Ո Ւ Թ Յ Ա Ն Կ Ո Մ Ի Տ Ե

Ն Ա Խ Ա Գ Ա Հ

ք. Երևան «29» հոկտեմբերի 2019 թ.

Հ Ր Ա Մ Ա Ն № 37-Ա/Ք

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԱՆՑԿԱՑՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ /ԹԵՄԱՏԻԿ/ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Առաջնորդվելով 2018թ. մարտի 23-ի «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» ՀՀ օրենքի հոդված 10-ի 12-րդ կետով և հաշվի առնելով 2009 թ. նոյեմբերի 15-ի «ՀՀ ԿԳՆ գիտության կոմիտեի և ԼՂՀ ԿԳՆ միջև Գիտատեխնիկական ոլորտում համագործակցության մասին» պայմանագրի 1-ին հոդվածի 1) կետի ե. ենթակետը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ.

1. Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարության կողմից անցկացվող գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային /թեմատիկ/ ֆինանսավորման շրջանակներում կիրառական արդյունքի ձեռքբերմանն ուղղված գիտական հետազոտությունների 2019 թվականի մրցույթին ներկայացված հայտերի գնահատման նպատակով ստեղծել մասնագիտական փորձագիտական խորհուրդ՝ համաձայն հավելվածի:
2. Խորհրդին (նախագահ՝ Սաղյան Աշոտ) կազմակերպել գիտական փորձաքննությունը և ներկայացնել հայտերի վարկանիշային ցանկը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության գիտության կոմիտեի գլխավոր քարտուղար Լևոն Մարդոյանին:

ՍԱՄՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված
ՀՀ ԳԿ նախագահի
«29» հոկտեմբերի, 2019 թ. թիվ
N 37-Ա/Ք հրամանի

ԿԱԶՄ

«ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ» ՄՐՑՈՒՅԹԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Հ/հ	Ազգանուն, անուն	Գիտական աստիճան	Աշխատավայր/պաշտոն
1.	Սաղյան Աշոտ	Քիմ. գիտ. դոկտոր	ՀՀ ԳԱԱ «Հայկենսատեխնոլոգիա» գիտահետազոտական կենտրոնի տնօրեն, խորհրդի նախագահ
2.	Առաքելյան Վալերի	Ֆիզ.-մաթ. գիտ. դոկտոր	Երևանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետի մոլեկուլային ֆիզիկայի ամբիոնի պրոֆեսոր
3.	Շիրինյան Լևոն	Քաղ. գիտ. դոկտոր	Հայկական պետական մանկավարժական համալսարանի իրավունքի պատմության և քաղաքագիտության ամբիոնի պրոֆեսոր
4.	Դևրիկյան Վարդան	Բան. գիտ. դոկտոր	ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն
5.	Սարգսյան Սուրեն	Պատմ. գիտ. դոկտոր	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնի առաջատար գիտաշխատող